

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 209-Ա

23 հուլիսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 20-ի N 1089-Ա, N 1090-Ա, N 1091-Ա, N 1092-Ա և N 1093-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 22-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) Ա/Ձ «Վահրամ Սարգսյան», Արագածոտնի մարզ, գ. Կայք 1-ին փող., 22 տ (ՀՎՀՀ 55800988).
- 2) Ա/Ձ «Հասմիկ Պողոսյան», Արագածոտնի մարզ, ք. Ապարան Բաղրամյան 56 (ՀՎՀՀ 55808097).
- 3) Ա/Ձ «Հրանուշ Սերոբան», Արմավիր մարզ, գ. Նոր Կեսարիա (ՀՎՀՀ 49582207).
- 4) Ա/Ձ «Թերեզա Գյոնջյան», Արմավիր մարզ, գ. Նոր Կեսարիա (ՀՎՀՀ 49527151).
- 5) Ա/Ձ «Լուսիկ Բաբայան», Լոռու մարզ, գ. Լեռնապատ (ՀՎՀՀ 66876059).
- 6) Ա/Ձ «Մարտունի Գրիգորյան», Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տ. Մեծի 79-Օ (ՀՎՀՀ 66900918).
- 7) Ա/Ձ «Արամայիս Աբազյան», Լոռու մարզ, գ. Լեռնապատ (ՀՎՀՀ 66876179).
- 8) Ա/Ձ «Գյուլնարա Գևորգյան», Գեղարքունիքի մարզ, գ. Ծովասար 2/30 (ՀՎՀՀ 74394393).

9) Ա/Ձ «Գոհարիկ Ալեքսանյան», Գեղարքունիքի մարզ, գ. Ծովասար, դպրոցի հարևանությամբ (ՀՎՀՀ 72908201).

10) Ա/Ձ «Սուսան Գալստյան», Արարատի մարզ, գ. Մարմարաշեն 31/2 (ՀՎՀՀ 47821909).

11) Ա/Ձ «Նորայր Լևոնյան», Արարատի մարզ, գ. Մարմարաշեն (ՀՎՀՀ 45125617):

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 23/07/20 16:41:37 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ